ՇՈՒՇԻՆ՝ ՄՏՔԻ ՋԱՀԱԿԻՐ

Ժամանակի վազքն արագացել է: Կանցնի ևս երկու տարի, և մեր ժողովուրդը շուքով կտոնի հայ պարբերական մամուլի հիմնադրման 200-ամյակը: Առաջին պարբերականից մինչև այժմ աշխարհի երկրներում ստեղծված հայագիր թերթերի, ամսագրերի և հանդեսների թիվը հասնում է չորս հազարի:

Պարբերական մամուլի հիմնական օջախներից մեկը 19-րդ դարի երկրորդ կեսին դարձավ Արցախը: Ուշագրավ է այն փաստը, որ երկրամասում տպագրությունը շուրջ կես դար ավելի շուտ է սկսվել, քան Բաքվում: Եվ խորապես խորհրդանշական է, որ արցախյան առաջին պարբերականն ունեցել է «Հայկական աշխարհ» անունը: Այն սկսել է լույս տեսնել 1874 թվականի ապրիլին, Շուշիում: Տնօրենը Խորեն Ստեփանեն էր, որն ավարտել էր ռուսական և արտասահմանյան մի քանի համալսարան, տիրապետում էր մի շարք լեզուների: Իշխանության մարմիններին հուշել Արցախում հիմնելու դպրոցներ, լուրջ ուշադրություն դարձնել մայրենիի ուսուցմանը՝ ահա պարբերականի գործունեության գլխավոր ուղղությունները:

Արցախի պարբերական մամուլի պատմության մեջ ուշագրավ էջ է կազմում «Քնար խոսնակը», գրական-գեղարվեստական մի պարբերական, որի նպատակն էր արցախցիների շրջանում սեր արթնացնել գեղարվեստական գրականության, արվեստի հանդեպ: Ուշադրության կենտրոնում արցախցիների կյանքն էր, նրանց հաստատակամությունը, դժվարությունները հաղթահարելու անկոտրում կամքը:

Կարծես «Քնար խոսնակի» շարունակությունը լիներ «Գործը», որը լույս տեսավ մեկ տարի հետո՝ 1882 թվականին, Շուշիում: Նրա էջերում լայնորեն լուսաբանվում էին Արցախի հոգևոր թեմական, Մարիամյան, ռեալական և այլ դպրոցների աշխատանքները, ցույց տրվում մանկավարժական աշխատանքի վիթխարի դերը և առաջավոր փորձը: Այսօր էլ հրատապ է ավելի քան մեկ դար առաջ թերթի էջերում տպագրված հետևյալ խոսքը. «Մանկավարժը մեր իրականության մեջ, ինչպես հարկն է, չի գնահատվում, մինչդեռ նա պետք է շրջապատված լինի ամենայն հոգատարությամբ»: «Գործը» լայն տարածում ուներ ոչ միայն Անդրկովկասում, այլև Ռուսաստանում:

Արցախում մեծ անուն էր վաստակել «Ղարաբաղ» թերթը, որի հիմնական աշխատողներից էր հայ գրականության անվանի դեմքերից մեկը՝ Վրթանես Փափազյանը: Հենց նա էր 1911—1912 թթ. խմբագրում պարբերականը: Այն Արցախի տվյալ ժամանակահատվածի տարեգրությունն է: Եվ դա բնական է: Թերթի շուրջը համախմբվել էին անվանի գրողներ, մտավորականներ, դերասաններ Գրիգոր Ներսիսյանը, Լևոն Աթաբեկյանը, Լեոն, ճանաչված ֆեյլետոնիստ Տմբլաչի Խաչանը (Կոնստանդին Մելիք-Շահնազարյանը), պրոֆեսորներ Առաքել Առաքելյանը, Խաչիկ Սամվելյանը և ուրիշներ:

Հայ մամուլի տարեգրության մեջ ուրույն հետք են թողել նաև 1915—17 թթ. Շուշիում լույս տեսած «Փայլակ» թերթը, «Միաձան» ամսագիրը և այլ տպագիր օրգաններ: 1874—1920 թթ. Արցախում հրատարակվել են 21 անուն թերթ և ամսագիր, որոնցից 19-ը՝ հայերեն և 2-ը՝ ռուսերեն: Բոլոր պարբերականների խմբագիր-հրատարակիչները եղել են հայեր: Այսպիսին էր Շուշին: Եվ այսօր, երբ մեր պապերի կառուցած այդ հրաշք քաղաքը նորից վերադարձվել է իր օրինական տերերին, Շուշին, հուսանք, կրկին կդառնա հայ առաջադիմական մտքի ջահակիրներից մեկը:

Ս. ԱՎԱԳՅԱՆ
Պրոֆեսոր